Ա. Սիմոնյան

## ԱԶԳԱՅԻՆԸ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Կուսակցության XXVII համագումարը համակողմանիորեն անդրադարձավ սովետական հասարակության հուզող զարգացման խնդիրներին, բնութագրեց գրականության ու արվեստի արդի վիճակը։ Համագումարում նշվեց, որ մեր գրականությունը, արտացոլելով նոր աշխարհի ծնունդը, դրանով մեկտեղ ակտիվորեն մասնակցել է նրա կազմավորմանը, ձևավորելով այդ աշխարհի մարդուն՝ իր երկրի հայրենասերին, իսկական ինտերնացիոնալիստին։

ՍՄԿԿ XXVII համագումարին ներկայացված Կենտկոմի քաղաքական զեկուցման մեջ ցույց տրվեց, որ սովետական բազմազգ սոցիալիստական մշակույթը, ներառնելով ազգային ձևերի ու գույների հարստությունը, դառնում է նշանակալի երևույթ համաշխարհային պատմության մեջ։ Միաժամանակ ուշադրություն դարձվեց այն իրողության վրա, որ առողջ հետաքրքրությունն այն ամբողջ արժեքավորի նկատմամբ, ինչ կա յուրաքանչյուր ազգային մշակույթի մեջ, չվերածվի ազգային մշակույթների փոխներգործության ու մերձեցման օբյեկտիվ պրոցեսից անջրպետվելու փորձերի։ Սա պետք է նկատի ունենալ նաև այն ժամանակ, երբ ազգային ինքնատիպության անվան տակ գրականության և արվեստի որոշ ստեղծագործություններում, գիտական աշխատություններում փորձեր են արվում հովվերգական տոներով ներկայացնելու հետադիմական նացիոնալիստական և կրոնական վերապրուկները, որոնք հակասում են մեր գաղափարախոսությանը, սոցիալիստական ապրելակերպին, գիտական աշխարհայացքին[1]։

[1] Տե՛ս Գորբաչով Մ. Ս., ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, «Հայաստան», 1986, էջ 88։

Արվեստը հասարակական գիտակցության այն ձևն է, որ սոցիալական իրականությունն արտացոլվում է բազմակողմանիորեն ու յուրովի։ Այստեղ էական է այն հանգամանքը, որ առաջին հերթին գեղարվեստական մարմնավորում են գտնում մարդկանց հասարակական հարաբերությունները, անհատի ներաշխարհը, ճակատագիրը, սոցիալական իդեալը։ Այս տեսանկյունից քննելով գեղարվեստի պատմությունը, հանգում ենք այն կարևոր եզրակացությանը, որ չնայած արվեստի զարգացումն ընթացել է ազգային հունով, այնուամենայնիվ, բովանդակության հիմնական գծերով այն մնացել է ինտերնացիոնալ։ Նման իրողությունը բխում է հասարակական կյանքի ընդհանուր օրինաչափությունների ինտերնացիոնալ բնույթից, մարդկանց կողմից իրականությունը օբյեկտիվորեն ընկալելու կարողությունից։

Երբ ուսումնասիրում ենք տարբեր ժողովուրդների դասական արվեստի նմուշները, ակնհայտ է դառնում այն ճշմարտությունը, որ հաճախ դժվար է որոշել, թե ում տալ նախապատվությունը, ով է շատ ազգերի կողմից յուրացված համամարդկային արժեքների հեղինակը, ինչպես են դրանք ազգային երանգավորում ստանում։ Մարդու սոցիալական փորձը սկզբունքային դրսևորումներում ինտերնացիոնալիստական է, բխում է նրա ու բնության, առարկայական աշխարհի հետ ունեցած փոխհարաբերություններից։ Չնայած ընդհանրականը ժողովուրդների կյանքում գերակշռող է ու մնայուն, այնուամենայնիվ ինքնատիպության որոշակիությունը պայմանավորվում է գոյություն ունեցող ազգային առանձնահատկություններով։ Առանց այդ առանձնահատկությունների ընդհանրականը կդրսևորվի գորշ ու միօրինակ ձևով։

Հայտնի է, որ բուրժուական գաղափարախոսությունը ազգը բնութագրել է որպես հավերժական, անփոփոխ, վերպատմական երևույթ՝ իրեն բնորոշ հատկանիշներով։ Իրականում ազգի հոգեկան խառնվածքը ժողովրդի կյանքի նյութական պայմաններից, հասարակական հարաբերություններից անջատ, ինքնաբավ ու անփոփոխ երևույթ չէ։ Սխալ է և այն տեսակետը, ըստ որի կասկածելի է համարվում ազ-

գի հոգեկան խառնվածքի ռեալ գոյությունը և բնութագրվում է որպես ֆիկցիա[1]:

Ազգի հոգեկան խառնվածքը (կամ, այսպես կոչված, ազգային բնավորությունը) յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ նրա կյանքի յուրօրինակ պայմանների արտացոլումն է։ Ժողովրդին շրջապատող աշխարհագրական ու բնական միջավայրը որոշակիորեն ներգործում է նրա հույզերի, տպավորությունների ու պատկերացումների վրա։ Ազգի հոգեկան խառնվածքը ձևավորվում և դրսևորվում է ժողովրդի բազմակերպ հասարակական գործունեության մեջ։ Այն առավել ցայտուն արտահայտվում է ազգային մշակույթի առանձնահատկություններում, այդ թվում և արվեստի յուրահատուկ հատկանիշների մեջ։

Ինքնատիպ են ամեն մի ժողովրդի արվեստի հատկանիշները։ Սակայն տարբեր ազգությունների կենսապայմաններում, հոգեկան խառնվածքում և մշակույթում կան նաև ընդհանրություններ։ Ազգային առանձնահատկությունները, որոնք արտացոլվում են արվեստի ասպարեզում, օրգանապես միահյուսվում են համընդհանուր արժեքներին։

Ազգային գեղարվեստական ստեղծագործության ինքնատիպությունը պայմանավորված է տվյալ ժողովրդի պատմական զարգացման, հասարակական կյանքի, ինչպես և բնաշխարհի առանձնահատկություններով։ Այդ բոլորն արտացոլվում է արվեստի ստեղծագործություններում՝ վերջիններիս հաղորդելով ազգային կոլորիտ, յուրատեսակ ազգային երանգ։ Ազգի հոգեկան խառնվածքը, հոգեբանությունը առավել պարզորոշ արտացոլվում են արվեստի այն ստեղծագործություններում, որոնք անմիջականորեն պատկերում են ժողովրդի կամ նրա առանձին ներկայացուցիչների կյանքը, հոգեբանությունը, վարքագիծը։ Ինչպիսի գեղարվեստական ստեղծագործության էլ վերցնենք, այնտեղ առկա են որոշակի հատկանիշներ, որոնք բնորոշ են տվյալ ազգին, թեև չի բացառվում նաև տարբեր ազգերում մի շարք հատկանիշների նմանությունը։

---

[1] Տե՛ս **Джандильдин Н.** Природа национальной психологии. Алма-Ата, 1971.

Ազգայինը չնչտված արտացոլվում է գեղարվեստական գրականության մեջ։ Խոսքի տարրդունակ ուժը գեղարվեստական փաստի է վերածում ազգային կյանքը բնորոշող հանգամանքները։ Դրանով իսկ գեղարվեստական գրականությունը ազգային կյանքի ճանաչման անսպառ աղբյուր է։ Դժվար է գտնել իսկական արվեստի գեթ մի նմուշ, որը կապված չլինի հարազատ միջավայրին, չարձագանքի սեփական ժողովրդի հոգեկան ապրումներին։ Ինքնատիպության բացակայությունը մահ է արվեստագետի համար և ապազգային արվեստ գոյություն չունի։ Իրականության գեղարվեստական ընկալումն ու ճանաչումը զերծ չեն ազգային արմատից։ Գեղարվեստական որքան մեծություններ համամարդկային ճանաչման են հասել, կամրջելով ազգայինը միջազգայինի հետ։ Համամարդկային թեմաներ շոշափող գեղարվեստական կերպարները անարյուն խրտվիլակների կվերածվեին, եթե կապված չլինեին այս կամ այն ժողովրդի կյանքին, չմարմնավորեին որոշակի ազգային կերպարներ և հոգեբանական տիպեր։ Տակավին Հեգելն է նշում, որ Շեքսպիրը կարողացավ ամենատարբեր ազգաների վրա դրոշմել անգլիական ազգային նկարագիրը, թեև միաժամանակ կարողացավ իսպանական դրամատուրգներից տարվել խոր և հիմնական, էական գծերով պահպանել օտար ժողովուրդների, օրինակ, հռոմեացիների, պատմական նկարագիրը[2]։

Արվեստագետի ինքնատիպությունն անբացատրելի, խորհրդավոր երևույթ չէ։ Այն ճանաչելի է, խարսխված մի շարք պատմական ու սոցիալ-հոգեբանական գործոնների վրա, որոնց համակցությունն ազգի նկարագիրն է։ Նույնիսկ այլազգի թեմաներով ստեղծված գործերում հեշտ է նշմարել արվեստագետի ազգային խառնվածքը։ Դա հասկանալի է, քանի որ արվեստագետը դիմում է այնպիսի թեմաների, որոնք հարազատ և հրատապ են, առաջին հերթին, սեփա-

---

[1] Տե՛ս Бурсов Б. Национальное своеобразие русской литературы, Ленинградское отделение СП, 1967.
Лихачев Д. С. Заметки о русском, «Новый мир», № 3, 1980.
[2] Տե՛ս Гегель, Эстетика, т. 1, М., 1968, стр. 285.

կան ժողովրդին։ Օրինակ, ազատության թեման ռուսական առաջնային և հոգեհարազատ է այն ժողովրդի արվեստի համար, որը ավելի ժամանակահատվածում պայքարի է ելել՝ ֆեոդալիզմի, գաղութատիրության դեմ։

Ազգային հատկանիշը բովանդակում է համամարդկային գծերի այնպիսի երանգներ, որոնք պատմականորեն հատուկ են տվյալ ազգին։ Օտարության, հայրենի օջախից հեռանալու, աշխարհի տարբեր երկրներում հանգրվանելու դառնությունը շատ ժողովուրդներ խոր հոգեկանությամբ չեն ընկալում, որովհետև անմիջապես իրենց մաշկի վրա չեն զգացել օտար միջավայրի անբարյացակամ մթնոլորտը, ուրիշի հողում սեփական մշակույթը պահպանելու և զարգացնելու նվիրական ձգտումը՝ Ծանոթ են այն ազգերը, որոնց բառապաշարում կա «սփյուռք» հասկացությունը։

Ազգայնությունից և փոխազդեցություններից դուրս արվեստ գոյություն չունի։ Ազգայնությունը միակողմանի գործողություն չէ, այն պայմանավորվում է արտաքին օբյեկտիվ գործոններով, որոնց անտեսելն անհնար է։ Ինչպես ամեն սերունդ շարունակում է նախորդների գործը, այնպես էլ արվեստագետը ելնում է ստեղծված արժեքներից, գտնում իր տեղն ու ձայնը գեղարվեստի աշխարհում։ Ազգայինը ևս բացարձակ արժեք չէ, այն նույնպես զարգանում է, կատարելագործվում, հարստանում։ Զուտ ազգային և թերված ազգային արվեստի հատկանիշներ չկան։ Դրանք բոլորն այս կամ այն չափով բովանդակում են համամարդկային արժեքները։

Սովորաբար ազգայինի բնույթը վերլուծելիս որոշ հետազոտողներ հիմնականում վկայակոչում են անցյալի արժեքները և չափանիշ ընդունում նախորդ սերունդների կերտած կոթողները։ Բայց դա հաճախ ճիշտ չէ։ Երեկվա նորը այնքան ազգային չի եղել, որքան ավանդական կարգերի որոշ։ Այդ են վկայում նրա հոգևոր կյանքը, ճարտարապետական դիմագիծը։ Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ»-ը մեր դարի լավագույն քանդակներից է։ Տաղանդավոր ար-

[1] Տե՛ս Писаревский Д., Раппопорт С. Проблемы национального развития при социализме и эстетическая наука, «Вопросы эстетики», № 7, М., 1965.

վիպագրեան տեսղեն ժամանակակից ազգային կերպար, ամփոփելով նրա մեջ մեր օրերի քաղաքակրթության համաշխարհային նվաճումները։ Արձանի վեհությունը, նրա ներքին դինամիզմը, հաղթականությունը զուգակցվում են ուժի և հզորության, արիության, հերոսության և ինքնագոհության, պայքարի ու հաղթանակի մղումներին։

Հետաքրքրությունն անցյալի արվեստի հանդեպ, որոշակի ձևերի, արտահայտամիջոցների օգտագործումը նպատակային և արդյունավետ են դառնում միայն այն դեպքում, երբ հին ձևերում հնարավոր է լինում գտնել նոր բովանդակություն։ Առնո Բաբաջանյանի դաշնամուրային «Վեց պատկերը» աչքի է ընկնում արտահայտչաձևերի արտակարգ բազմազանությամբ, կոմպոզիցիան կուռ կառուցվածքով։ Այս նորարարական գործում ազգային երաժշտական ավանդույթները պատշաճ տեղ են գրավում։

Ազգայինը զարգացող պրոցես է, որում առաջ են գալիս նոր կերպարներ, գեղագիտական ընդհանրացումներ, միջավայրը գեղեցկացնող ինքնատիպ գույներ։ Ժամանակակից ազգային կերպարը բովանդակում է միջազգային, համամարդկային արժեքներ[1]։ Մեր հինավուրց լեռնաշխարհի տնտեսական ու մշակութային շառավիղներն անցնում են հողագնդի բոլոր միջօրեականներով։ Գտնվելով սոցիալիստական ազգերի հետ սերտ համագործակցության մեջ, հայ ժողովուրդը մեծապես ընդլայնել է իր գործունեության ոլորտներն ու մասշտաբները, աշխարհի հետ մայրենի լեզվով խոսելու հնարավորությունները։ Վերածնված ժողովրդի արվեստը կոչված է մարմնավորելու այն նորը, որն ստեղծվել է սոցիալիստական հասարակարգի շնորհիվ, և առաջին հերթին, կերտելու աշխատավորի ամբողջական կերպարը։ Սովետահայ մարդու հոգեբանական խառնվածքն այսօր հարստացել է նոր գծերով։ Նրա ներաշխարհում ծնվել են կենսահաստատ զգացումներ, ստեղծագործելու, խիզախելու նոր տենչեր։ Սովետահայ քաղաքացին մեծ տերության ներկայացուցիչն է, օժտված աշխարհըզգացողության լայն մասշտաբներով, իր մեջ զուգակցելով ազգայինը և միջազգայինը,

[1] Տե՛ս Егоров А. Искусство и общественная жизнь, М., 1959.

հանրապետականը և միութենականը։ Այս բոլորի առնչագործական յուրացումը նպաստում է ժամանակակից ազգային գեղարվեստական կերպարի ստեղծմանը։

Ազգայինը ձևական պիտակ չէ և ոչ էլ հասարակական միջավայրից կտրված անիմանալի, ինքնամփոփ էություն։ Այն, առաջին հերթին, սոցիալ-էթնիկական հանրության ապրելակերպի նկարագիրն է, հասարակական ընդհանուր օրինաչափությունների յուրօրինակ արտահայտությունը։ Հասարակական գիտակցության ոչ մի ձևում ազգայինն այնքան վառ ու տպավորիչ հանդես չի գալիս, որքան արվեստում։ Աշխարհագրությանը ոչ քաջատեղյակ մարդը արվեստի միջոցով ծանոթանում է ազգերի ու ժողովուրդների հետ։ Ճիշտ է նկատել Սիլվա Կապուտիկյանը «Փարավոնները գեն քայլում են» ուղեգրության մեջ, որ առաջին անգամ լինելով Փարիզում, օտարություն չի զգացել, քանզի գրքերից արդեն գիտեր Փարիզը՝ մարդկանց, փողոցները, ճարտարապետական կոթողները։

Ազգային յուրահատկության, ազգային բնավորության պրոբլեմատիկան ուսումնասիրող գրականության մեջ դեռևս լրիվ չի հաղթահարված վերացականությունը, չի արված այդ կատեգորիաների բովանդակության զարգացման դիալեկտիկան։ Նկարիչների անհատական ցուցահանդեսներին նվիրված առանձին գրախոսություններում, բանավոր ելույթներում ազգային յուրահատկության հարցն արծարծելիս հանդիպում ենք պարզունակ ու սխալ մեկնաբանությունների, երբ ազգային առանձնահատկությունը դիտվում է լոկ աշխարհագրական միջավայրի, կենցաղային մանրամասների անմիջական արտացոլման մեջ։

Ըստ մարքս-լենինյան իմացության տեսության, հասարակական-պատմական առանձնահատկությունները, աշխարհագրական միջավայրը նախ արտացոլվում են մարդու հոգեկան կերտվածքում, իսկ ապա դրսևորվում արվեստում։ Արվեստագետը պատկերում է բնությունը, կյանքը ոչ թե ընդհանրապես, այլ այն ասպեկտով, ինչը հուզում է ժողովրդին, հասարակությանը՝ ժամանակի կոնկրետ հատվածում։

¹ Տե՛ս Егоров А. Проблемы эстетики, М., 1977.

Արվեստի ստեղծագործության մեջ իրականությունը միջնորդավորված է արտացոլվում, այստեղ կյանքի մասին խոսվում է ոչ թե առհասարակ, այլ կոնկրետ։ Շնորհիվ գեղարվեստի ստեղծագործությունների անմիջական ընկալման, մենք ճանաչում ենք ոչ միայն յուրաքանչյուր տվյալ ժողովրդի ապրելակերպը, պատմությունը, այլև էսթետիկորեն տեսնում նրա ներաշխարհը, հոգեկան կերտվածքը, տեմպերամենտը։ Դասական արվեստի ստեղծագործությունների միջոցով ընթերցողը, ունկնդիրը, հանդիսատեսը հաղորդակից են դառնում տվյալ ժողովրդի կյանքին, կենցաղային, ազգային հոգեկան խառնվածքին։ Ազգի հասարակական գոյաձևը և բնական-նյութական պայմանները որոշակի ներգործություն են ունենում արվեստի վրա։ Կարելի՞ է արդյոք ռուսական մեղմ, արտահույզ ու շոյող բազմաձայն երգը շփոթել արաբական մեղեդու հետ։ Երաժշտությունը մարդկային ներաշխարհի, զգացումների և ապրումների արտահայտման ինքնատիպ հնարավորությունների շնորհիվ կարողանում է գեղարվեստական իրականության վերածել ժողովրդի հոգեկան խառնվածքի երանգները, բնորոշ գծերը։ Ազգի երաժշտական մտածողության առանձնահատկությունները մեղեդային կարգում դրսևորվում են ամբողջովին և ընդգծված ձևով։ Մեղեդու մեջ ի հայտ է գալիս երաժշտության ազգային յուրահատկությունը։

Ի հակադրություն բուրժուական արվեստագիտության, որտեղ իշխում է արվեստի ազգային առանձնահատկությունների բացարձակացման միտումը, մարքս-լենինյան էսթետիկան ուսումնասիրում է ազգայինի և ինտերնացիոնալիստականի փոխհարաբերության դիալեկտիկան։

Առանձին հեղինակներ ազգայինի և ինտերնացիոնալի հարաբերակցությունն արվեստում նմանեցնում են փիլիսոփայության մեջ բովանդակության ու ձևի կատեգորիաների փոխհարաբերությանը։ Ընդհանուրի, առանձնահատուկի, մասնակիի կատեգորիաները, անշուշտ, օգնում են բացահայտելու տվյալ պրոբլեմի որոշ կողմեր։ Միևնույն ժամանակ մեթոդոլոգիապես սխալ կլիներ արվեստի ոլորտում սահմանափակվել միայն այդ կատեգորիաների տարածմամբ։ Ազգայինը և ինտերնացիոնալիստականը վերածա-



8—7462

կան ընդհանրություն չեն, այլ պատմական կոնկրետ սոցիալ-դասակարգային երևույթներ[1]: Բոլոր ազգերի համար ինտերնացիոնալիստականի տակ միայն ընդհանուրը հասկանալ, նշանակում է՝ աչքերը փակել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և բուրժուական կոսմոպոլիտիզմի միջև գոյություն ունեցող արմատական հակադրության հանդեպ: Ազգայինը նույնպես վերացական չէ և այն չի կարելի ընկալել գեղարվեստի դասակարգային բնույթի ըմբռնումից դուրս: Արվեստում ազգայինի և ինտերնացիոնալիստականի դիալեկտիկայի պարզաբանման համար քիչ է իմանալ ընդհանուր ժողովրդի ստեղծագործական պրակտիկան, ազգային գեղարվեստական ավանդները: Այստեղ անհրաժեշտ է ազգայինի և ինտերնացիոնալիստականի զարգացման միտումների խոր իմացություն:

Մարդկանց նյութական կյանքի պայմանների ընդհանրությունը չի բացառում անհատական բնավորությունների ձևավորումը, որոնք կրում են դասակարգերի և ազգերի սոցիալ-հոգեբանական կնիքը: Նյութական կյանքի նույնանման պայմանները՝ բնական միջավայրը, ժողովրդի պատմությունը, միջազգային դրությունը ամբողջ ազգի համար ծնում են հոգեկան կերտվածքի ընդհանուր գծեր, սոցիալական երևույթներին տալով այս կամ այն երանգը: Այստեղ դասակարգային հոգեբանությունը թելադրող գործոն է, որը ներազդելով գեղարվեստական պրոցեսների վրա, հարստացնում է այն ինտերնացիոնալիստական հատկանիշներով: Սոցիալական հոգեբանության մեջ չի կարելի անջատել դասակարգային և ազգային գծերը, բայց և չի կարելի նույնացնել դրանք: Չկա մաքուր ազգային արվեստ, ինչպես չկա վերացական ապազգային բնավորություն: Դրանք գոյություն ունեն դիալեկտիկական սերտ միասնության մեջ: Սոցիալական այս բարդ երևույթը զարմանալի ուժով բացահայտված է ռուս դասական գրականության կերպարներում, որտեղ դասակարգային և ազգային հոգեբանության հատկանիշները տրված են միասնության մեջ: Օնեգինը, Պեչորինը, Չիչիկովը, Բազարովը, Օբլոմովը, Ռախմետովը, առաջին հերթին

[1] Տե՛ս Федосеев П. Н. Диалектика современной эпохи, М., 1978.

լինելով դասակարգային տիպեր, միաժամանակ ազգային բնավորություններ են։ Նույնը կարելի է ասել Սունդուկյանի, Պարոնյանի ու Շիրվանզադեի ստեղծած կերպարների մասին։

Ազգային հոգեկան կերտվածքն աչքի է ընկնում որոշակի կայունությամբ։ Ժողովուրդների՝ հազարամյակներով Հղկված միևնույն կյանքը, բնական, սոցիալական, պատմական տարբեր պայմանները, ազգային դարավոր լուծը ամրապնդել են ազգային-հոգեկան կերտվածքի առանձնահատկությունները, որոնք փոխանցվել են սերնդից սերունդ։ Այդ կայունությունն ուժեղացել է նաև շնորհիվ հոգեկան հանրության ամրապնդման՝ կենցաղում, ավանդույթներում, լեզվի, արվեստի մեջ։ Դա միջոց է դարձել ազգային համախմբման ու անկախության համար[1]։

Չնայած ազգային հոգեբանությունն օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, այն ենթակա է նաև փոփոխման և նրա զարգացումն ընթանում է հնի և նորի պայքարի միջոցով։ Շրջապատող միջավայրը ակտիվ ներգործում է ազգի հոգեկան կերտվածքի վրա, ներազդում են ոչ միայն ավանդույթները, այլև նորը, ժամանակակիցը։

Ինտերնացիոնալ հարաբերությունները ու կապերը տարբեր ժողովուրդների համամարդկային հոգևոր արժեքների զարգացման ու բյուրեղացման մշտական աղբյուրներ են՝ հատկապես սոցիալիզմի օրոք։ Ահա թե ինչու սոցիալիստական հասարակարգի պայմաններում ազգի հոգեբանությունն աստիճանաբար միատարր է դառնում։ Բանվոր դասակարգի դասակարգային կազմակերպվածությունը, համախմբվածությունը, նպատակասլացությունը մեր երկրում վերածվում են համաժողովրդական գծերի։ Առաջին անգամ մարդկության պատմության մեջ առաջավոր դասակարգի հոգեկան կերտվածքի հատկանիշներն ստանում են գերակշռող համազգային բնույթ, չփոխարկվելով միայն յուրահատուկ ազգայինի։ Մեր երկրի բոլոր ժողովուրդներին բնորոշ են կոլեկտիվիզմը, համերաշխությունը և ուրիշ շատ առաքինի հատկանիշներ,

[1] Տե՛ս Поршнев Б. Ф. Социальная психология и история, М., 1966.

որոնք միաձուլվելով՝ ձևավորում են սովետական ընդհանրությունը[1]։ Այս հասկացությունն արդեն կյանք է մտել, արտացոլելով հոգեկան կերտվածքում առաջացած նորը, որն ընդհանուր է ՍՍՀՄ բոլոր ազգերի համար։ Սոցիալիստական ազգերի հոգևոր կերտվածքի ոլորտում տեղի է ունենում երկու նշանակալի պրոցես՝ հոգեկան նոր գծերի յուրացում, զատակարգային առաջադիմական ավանդույթների արմատավորում։ Երկու միտումն էլ հանգեցնում են ազգերի ծաղկմանն ու մերձեցմանը։

Հասարակական կյանքի միջազգայնացումը նախասոցիալիստական և ժամանակակից կապիտալիստական աշխարհում այնպիսի խորությամբ ու ծավալով չի ընթացել, ինչպես սոցիալիստական հասարակարգում։ Դա հասկանալի է, քանի որ այն միջնորդները, որոնք առկա են անտագոնիստական հասարակարգերում, սոցիալիզմի պայմաններում վերանում են կամ վերափոխվում։ Սոցիալիզմի օրոք ազգերի միջև հաստատված հավասարությունն ու համերաշխությունը, թշնամանքի և փոխադարձ օտարման վերացումը նպաստում են ժողովուրդների միջև բազմազիսի կապերի ամրապնդմանը։

Փոխհարստացման պրոցեսում ծնվում ու առաջանում են ազգային մշակույթի նոր արժեքներ, որոնք դառնում են ողջ սովետական կուլտուրայի սեփականությունը։ Ազգային արվեստների նշանակալից ստեղծագործությունները լայն ճանաչում են գտնում։ Նկատենք նաև, որ մշակույթների մերձեցումը տևական պրոցես է և պատմական առումով այն յուրօրինակ տեղի է անցել[2]։ Հեղափոխության առաջին տարիներին գեղարվեստական լուսաբանման հիմնական թեման նոր իրականության ընդունումն էր։

Կյանքի հեղափոխական նորացումը չէր կարող իր դրոշմը չթողնել գեղարվեստական պրակտիկայի վրա։ Մայակովսկին, Զարենցը, Էյզենշտեյնը, Դեյնեկան հեղափոխության արդյունքն են, նոր աշխարհի արվեստագետները։ Մայակովսկին իր հզոր պոեզիայով գեղարվեստորեն պատկե-

[1] Տե՛ս Современные этнические процессы в СССР, М., 1977.

[2] Տե՛ս Национальное и интернациональное в советской литературе, М., 1971.

րեց հեղափոխությունը։ Նրա նորարարական ստեղծագործություններում հասակով մեկ հառնեց ինտերնացիոնալիզմի թեման, որը բանաստեղծի հավատամքի սկզբունքներից էր։ Նոր կյանքի երգչի չափածո խոսքն ուղղված էր բազմալեզու աշխարհին, տոգորված էր վեհ գաղափարներով։ Սովետահայ արվեստում հեղափոխության թեման գեղարվեստական դասական մարմնավորումը գտավ Չարենցի պոեզիայում։ Բանաստեղծի բովանդակալից ու ինքնատիպ երկերում պատմության ամենաարմատական հեղաբեկումն այնքան վառ ու տպավորիչ գույներով է արված, որ ակամայից, երբ խոսք է լինում մեծ Հոկտեմբերի մասին, վերհիշում ես չարենցյան գեղարվեստական կատարյալ ստեղծագործությունները։ Էյզենշտեյնի «Զրահակիր Պոտյոմկինը» տակավին շարունակում է հաղթական երթը աշխարհի մեծ էկրանների վրա, սերունդների հիշողությունում վերակենդանացնում պատմության մեծագույն իրադարձությունները։ Դեյնեկայի «Պետրոգրադի պաշտպանությունը» նոր կյանքի հաստատման համար պատմական պայքարի գեղարվեստական վավերագիրն է, որի չթուլացող ներգործությունը հարատև է, այժմեական։

Սովետական արվեստի ձևավորման շրջանում Լենինի կերպարը դարձավ նոր մարդու կերպարի կերտման նախատիպը, որի գեղարվեստական մարմնավորումն անհնար էր առանց ազգային արվեստների ավանդույթների։ Պատահական չէ, որ լենինյան թեմատիկան լայնորեն տարածվեց ժողովրդական բանահյուսության մեջ, պրոֆեսիոնալ արվեստում։

Քսանական թվականներին կոմունիստի կերպարը գեղարվեստական առաջնահերթ խնդիր էր։ «Ես կոմունիստ եմ»,— այսպես անվանեցին իրենց չափածո գործերը տարբեր ազգերի մի շարք բանաստեղծներ։ Ստեփան Զորյանը գրեց «Հեղկոմի նախագահը»։ Ի դեմս կոմունիստի, սովետական արվեստն ունեցավ նոր հերոս, որն իր ներաշխարհով, երևույթներն ընկալելու ու վերլուծելու կարողությամբ արմատապես տարբերվում էր անցյալի դասական արվեստում ստեղծված գրական հերոսներից։ Սոցիալիստական հաստա-

բանարվում հերոսը միայնակ չէ, նա ամբողջ թեկերով կապված է կոլեկտիվին, ակտիվորեն է ներգործում միջավայրի վրա։ Ճշմարտացի ըմբռնել և ցույց տալ հեղափոխական իրադարձությունները արվեստագետը կարող է միայն այն դեպքում, երբ նա համոզված է իրականությունը և ճիշտ է ըմբռնում կոմունիստների դերը ժողովրդական շարժման մեջ։ Ներքափի անհատականությունը ոչ միայն չի բացառում վերջինիս տիպականությունը, այլև, ընդհակառակը, ամրապնդում է այն։ Առանց բոլշևիկների կյանքի կոնկրետ եղելությունների ու հարաբերությունների պատկերման, անհնար է ցույց տալ կուսակցության գործունեությունը։ Կոմունիստների դերը պայքարում, ժամանակաշրջանի կոլեկտիվացման շրջանում, գեղարվեստական մեծ վարպետությամբ ներկայացրել Շոլոխովը «Հերկած խոպանում»։ Գյուղի նկարագրում գյուղական «խոպանը» Դավիդովը մենակ չի հերկում. նա գտնում է համախոհներ ու աջակիցներ հանձինս Ռազմյոտնովի ու Նագուլնովի։ Արվեստագետը նոր ձևով է ցուցանել Դավիդովի քաղաքական հասունությունը, կազմակերպվածությունը, փորձը։ Հերոսներից յուրաքանչյուրը օժտված է մարդկային որոշակի առանձնահատկություններով, որոնք ի հայտ են գալիս խոսքում, խոհերում, վարքագծում, մարդկանց հետ փոխհարաբերություններում, ամենուր։

Սովետական արվեստի փորձը վկայում է, որ կոմունիստի կերպարը դարձավ մեր հասարակության շարժումը խոր ու ճշմարտացի բացահայտող արվեստագետի ստեղծագործության անկապտելի մասը։ Այդ կերպարների գեղարվեստական մեծ ուժը բացատրվում է նրանով, որ մարմնավորելով իրականության տիպական գծերը, վերջիններս չոր ընդհանրացումներ չեն, այլև իրական կյանքից վերցրած օրինակներ[1]։

*Թեմայի*, նրա լուծման, կենսահաստատ պաթոսի միասնությունն ընդգծված է արվեստագետների որոնումների միասնությամբ, որոնք ամեն դեպքում ուղղված են հոգեբանորեն ավելի խոր բացահայտելու հերոսին, հաստատելու բարձր գաղափարական-բարոյական չափանիշներ։ Սա-

[1] Տե՛ս **Ломидзе Г.** В поисках нового, М., 1963.

կայն ձևական ու դեկլարատիվ կլիներ նման ընդհանրությունը, եթե այն չսնվեր ժողովրդի լինելության իրականությունից, որ թափանցում է արվեստագետի ստեղծագործական որոնող միտքը։ Չէ որ հենց այդ իրականությունն է պայմանավորում անհատական բնավորությունների անկրկնելիությունը, հերոսների տարբեր ճակատագրերը, որոնք իրարից անտեղյակ գիտակցաբար պայքարում են հանուն նորի ընկալման ու հաստատման։ Դրա համար այդ հերոսների հոգեկան հույզերը և բնավորությունների արտաքին դրսևորումները նման են։ Հաճախ նրանց անհանգիստ միտքը երբ փնտրելով՝ կտրվելու կարծրացած գյուղական պատկերացումներից և սեփական տան, հողի, տնտեսության հոգսից, վերադառնում է նույն խնդրին, հարցնելով մերթ տանջալից կասկած ու տարակուսանք, մերթ հուսահատություն ու շփոթություն։ Ինչպես, այստեղ զգացվում է հերոսների ապրելակերպից բխող սովորույթների ու վարվեցողության իներցիան։ Սակայն որպես նորի երաշխիք, ազատ ստեղծագործելու մղում, նրանցից յուրաքանչյուրի մոտ ուժեղ է աշխատանքային կոչումը, գործելու անհանգիստ ծարավը[1]։

Այս բոլորն ընդհանրական է, բայց ընդգրկելով արվեստի հերոսին, այն նրա կերպարը չի զրկում ազգային որոշակիությունից։ Վերջինս բացահայտվում է ոչ այնքան բնավորության գծերի բացառիկությամբ, որքան դրանց դրսևորման ձևերի ու պայմանների յուրօրինակությամբ, կյանքի այն պարագաների միջավայրով, որոնք իրենց դրոշմն են թողնում հերոսի խոհերի ու զգացումների վրա։ Ազգային միջավայրը, որ դրսևորվում է հերոսի բնավորությունը, հանդես է գալիս որպես կերպարի «միս ու արյուն», արվեստագետի կողմից ժողովրդի պատմական, սոցիալական ու հոգեկան փորձի վերաիմաստավորում։ Մեր արվեստագետները իրենց սերունդների ազգային բնավորությունը ներկայացնելով, չեն շրջանցում այն որակական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ազգի հոգեբանության մեջ։ Չինգիզ Այթմատովը

[1] Տե՛ս **Оскоцкий В.** Интернационализм и национальные традиции в литературе (Современная советская литература в духовной жизни общества развитого социализма), М., 1980.

«Մնաս բարով, Դալարիի» վիպակում արտացոլել է սոցիալական պայքարի փորձը, գեղարվեստորեն մեկնաբանել սովետական հասարակության զարգացման էական կողմերը, բացահայտել սովետական մարդու հասկացության վեհ իմաստը: Վիպակում բոլոր գործողությունները ծավալվում են Կիրգիզիայում, սակայն ստեղծագործության բովանդակությունը համասովետական է, ռուսաստանական: Կիրգիզ գյուղացու կերպարում մարմնավորված է տիպիկ սովետական մարդը, հարազատ ու հասկանալի մեր երկրի բոլոր ազգությունների մարդկանց: Պատկերելով մեր բազմազգ ժողովրդի կյանքը, սովետական արվեստագետները առաջ են մղում հասարակության ու անհատի պրոբլեմը: Նրանք ձգտում են համասովետական, համամարդկային գաղափարները իմաստավորել կոմունիստական աշխարհայացքի դիրքերից: Յուրաքանչյուր ժողովրդի արվեստում արտացոլվում են համասովետականը, ինտերնացիոնալիստականը: Արվեստի ինքնատիպ ստեղծագործությունները բովանդակում են ժամանակակից կյանքի հուզող պրոբլեմները: Հիշենք ռուսական «Նախագահը», վրացական «Զինվորի հայրը», լիտվական «Ոչ ոք չէր ուզում մեռնել» կինոնկարները: Այստեղ արտացոլված են սովետական ամեն մի ազգության առաջավոր մարդկանց խոհերն ու զգացումները, որոնք ստիպում են խորհրդածել հումանիզմի, արդիականության պրոբլեմների շուրջ:

Ամեն մի ժողովրդի արվեստում անպայմանորեն արտացոլվում է նրա պատմությունը, և այժմեականությունը վերջինիս հետ զոդվում է ժառանգական կապի մեջ: Ազգայինը, մասնավորապես ժամանակակից արվեստում, հարստացած է տարբեր ժողովուրդների մշակութային, հոգեկան արժեքներով, որոնք նոր երանգ են տալիս ավանդական չափանիշներին, առավել ցայտուն դարձնում ազգայինի դրսևորման ներկապնակը: Ազգայինը զարգացող պրոցես է, որը սերտորեն առնչվում է սոցիալական իրականության բոլոր կողմերի հետ: «Բարև, ես եմ» ֆիլմը ավանդապաշտներին չէր գոհացնի, քանի որ հերոսները ժամանակակից ֆիզիկոս գիտնականներ են և չունեն առանձնապես շեշտված ազգային բնավորության գծեր: Կինոնկարի ստեղծողները տալիս

հերթին ձգտել են պատկերել հերոսների ստեղծագործական կամքը, կյանքում ինքնահաստատվելու վճռականությունը, դժվարությունները հաղթահարելու պատրաստակամությունը։

Սոցիալիստական ազգերի համակողմանի մերձեցումը ազգամիջյան հարաբերություններում և մարդկանց անձնական գիտակցության մեջ առաջացնում է նոր հույզեր ու զգացումներ, որոնք, ըստ էության, նոր հասարակարգի արգասիք են։ Սովետական արվեստի լավագույն գործերում արտացոլված են մեր մարդկանց բարոյական նկարագրի գծերը, որոնք փաստորեն սոցիալիստական հասարակարգի կառուցման տարեգրության բարոյաէսթետիկական վավերագրերն են։

Փնտրել սովետական մարդկանց հոգեկան խառնվածքում միայն ազգային պատկանելությունն ընդգծող հատկանիշներ, նշանակում է չխորանալ երևույթների էության մեջ, չցանկանալ տեսնել մեր ժամանակակցին։ Ռեալ կյանքի ուսումնասիրությունը հրամայաբար թելադրում է վեր հանել սովետական մարդու կերպարի բոլոր կողմերը։ Ինչ խոսք, աշխարհագրական և որոշ պատմական գործոններն իրենց որոշակի դրոշմն են թողնում ազգային բնավորության վրա, սակայն դրանք վճռական դեր չեն խաղում ազգի կերպարի բնութագրման գործում։

Բացահայտ ճշմարտություն է, որ ազգային բացառիկության գաղափարը հակասում է ազգի առաջադիմությանը։ Այս կամ այն ժողովրդի ազգային գիտակցության ինքնատիպ գծերի ֆետիշացումը թույլ չի տալիս տեսնել ընդհանրապես պատմական փորձի, մյուս ժողովուրդների նվաճումները և համաշխարհային քաղաքակրթության հետ հաղորդակցվելու արհեստական խոչընդոտներ է ստեղծում։ Մարդը հասունանում է ազգային հողում, սնվելով նրա ընդերքից։ Սակայն սոցիալիստական իրականության մեջ նրա հոգևոր կերպարում ազգայինը և ինտերնացիոնալիստականը միահյուսվում են։ Այստեղ մարդուն խորթ են ապազգայնությունը, ազգային սահմանափակվածությունը։ «Զինվորի հայրը» կինոնկարի հերոս Մախարաշվիլին կախեթցի է, հին այգեգործ։ Երկար ժամանակներ նրա նախնիները խաղող էին աճեցրել, օրնիրուն խնամել բնության այդ հրաշալիքը։

խաղողը կախիթյա համար գոյատևման պայման է, Հայր-
ապակչն։ Մախարաշվիլին ֆաշիստական հողում մեղմ լո-
յում է ցրված, խնամքից զրկված խաղողի վազը, հարձա-
կանգնեցնում է հարազատի։ Այդպես մշակը ապտակում է մահ-
կիտաին, որը փորձում էր տանկով անցնել վազերի վրայով։
Մախարաշվիլու համար խաղողի վազը կենդանի էակ է, որին
անհրաժեշտ է պաշտպանել անարգար հատուցումից։ Դիմար-
թի խաղողի այգին նույն խոհերն ու զգացմունքներն արթնաց-
նեք, ասենք յակուտի, ղազախի կամ բելոռուսի մոտ։ Հի-
րավի. մարդու կենսափորձը, դրամաները ուղղակիորեն
ներազդում են անձնավորության ներաշխարհի վրա, նրա
հոգական խառնվածքի վրա։ Նկատենք նաև, որ երբ բնու-
թագրվում են այս կամ այն ժողովրդի ազգային առանձնա-
հատկությունները, սխալ է դիմել վերացական հոգեբանական
հասկացությունների, առհասարակ դիտակցությանը։ Անհրա-
ժեշտ է հաշվի առնել ամեն մի ժողովրդի յուրօրինակ ապրե-
լակերպը, այն առանձնահատուկը, անկրկնելին, որոնք հա-
տուկ են տվյալ ազգին։ Լենինը գեղարվեստական ստեղծա-
գործության մեջ համարում էր ազգային կերպարների
ինքնատիպ գծերը։ Արվեստի ստեղծագործության ազգային
և ինտերնացիոնալիստական գծերը վերլուծելիս անհրաժեշտ
է բազմակողմանիորեն քննել ստեղծագործության կենդանի
հյուսվածքը, վեր հանել նշված հատկանիշների դրսևորու-
մը բովանդակության և ձևի մեջ[1]։

Այսպես, սոցիալական ու գեղարվեստական զարգացման
պատմական օրինաչափությունները պահանջում են առավել
ուշադրություն նվիրել սովետական ժողովուրդների մշա-
կույթների ինտերնացիոնալ հիմքին, համակողմանի ամրա-
պնդել սովետական մարդկանց հոգևոր հանրությունը։
ՍՍՀՄ ժողովուրդների փորձը հաստատում է, որ ազգային
գեղարվեստական մշակույթների ծաղկումը հանգեցնում է
նրանց ինտերնացիոնալ միասնության ամրապնդման։ Մի-
գանում շատ գեղարվեստական երևույթներ տարածվել են ոչ
թե ժողովրդի կողմից մյուս արժեքների յուրացմամբ, այլ

[1] Տե՛ս **Ломидзе Г.** Интернациональный пафос советской литературы, М., 1967.

սովետական բոլոր ժողովուրդների կոլեկտիվ փորձի հիման վրա։ Ակնհայտ է, որ միասնական ինտերնացիոնալ փորձը առավել նշանակալից ու հարուստ է, քան ցանկացած առանձին, ազգային փորձը։ Անհրաժեշտ է տեսնել այդ միտումների ներքին փոխադարձ կապը ոչ միայն պատմական տվյալ էտապում, այլև դրանց ինտերնացիոնալ միասնության հարաճուն նշանակությունը սովետական ժողովուրդների կյանքում։ Հոգևոր ոլորտում ինտերնացիոնալիստականի ու ազգայինի զարգացման օրենքները դիալեկտիկական միասնություն են և ոչ թե մեխանիկական նույնություն։

Սովետական ինտերնացիոնալ մշակույթը, քննադատաբար յուրացնելով համաշխարհային-պատմական գեղարվեստական փորձը, արվեստի զարգացման բոլոր փուլերի փորձը, զարգանում է սեփական, սոցիալիստական հիմքի վրա։ Հայտնի է, որ մեր երկրի շատ ժողովուրդների արվեստները չեն անցնում այն փուլերը, որոնք բնորոշ են մարդկության գեղարվեստական զարգացմանը։ Չեն անցնում, որովհետև հնարավորություն ունեն հենվելու ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ընդհանուր, ինտերնացիոնալ գեղարվեստական մշակույթի վրա։ Սակայն դրանով նրանց ազգային առանձնահատկությունը չի աղքատանում, ընդհակառակը, հարստանում է։ Սովետական ժողովուրդների արվեստները հոգեպես ավելի են հարստանում, բազմակերպ են դառնում դրանց ազգային գույներն ու ձևերը[1]։

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հիմքի վրա ազգային արվեստների ստեղծագործական համագործակցումը բարենպաստ պայմաններ է ստեղծում դրանց արագ զարգացման համար։ Մի բան, որ անցյալում հարյուրամյակներ էր պահանջում, սոցիալիզմի օրոք սովետական ժողովուրդները անցան մի քանի տասնամյակների ընթացքում։ Երեսնական թվականներին ստեղծվեցին թուրքմենական, չուվաշական, յակուտական վեպերը, հետագայում երևան եկան կիրգիզների, բաշկիրների, Հյուսիսային Կովկասի, Դաղստանի ժողովուրդների վեպերը։

---

[1] Տե՛ս Ломидзе Г. Ленинизм и судьбы национальных литератур., М., 1974.

Սոցիալիստական իրականության պայմաններում ազգային գեղարվեստական մշակույթների մերձեցումը և փոխադարձությունը զգալի կրճատում կամ ի չիք են դարձնում դրանց պատմա-էթնիկական զարգացման փուլերի միջև եղած տարբերությունը։ Գեղարվեստական մշակույթների արագ զարգացումը դրսևորվում է ոչ միայն տեմպերի, ժամանակների «խտացման» մեջ։ Այն արտահայտվում է նաև նրանում, որ գեղարվեստական մշակույթները սոցիալիստական հիմքի վրա հնարավորություն ունեն խուսափելու դասակարգային սուբյեկտիվիզմի, ֆորմալիզմի և այլ օտարածին տարրերից, ինչպես և այլ բնույթի խոչընդոտներից, որոնք հայտնվում են արվեստի առաջընթացի ոչ ուղղագիծ հունում։

Սոցիալիստական ազգերի ինտերնացիոնալ միասնությունը վերափոխիչ ներգործություն ունի ազգային գեղարվեստական գիտակցության զարգացման վրա։ Ազգային կերպարային ավանդույթները, որոնք դրսևորվում են արվեստագետի ստեղծագործությունում, սովետական ժողովուրդների միասնության պայմաններում դառնում են համասովետական սեփականություն, ունակ արտահայտելու սոցիալիստական ազգերի ընդհանուր ձգտումը միասնական հասարակական, բարոյական, էսթետիկական իդեալին։ Սովետական արվեստի զարգացման պրոցեսում ի հայտ են գալիս իրականության գեղարվեստական յուրացման բազմաթիվ գույներ և ձևեր, որոնք սոցիալիստական բովանդակության արտահայտման շնորհիվ արժանանում են համընդհանուր ճանաչման։

Ինտերնացիոնալիզմը սովետական արվեստագետի աշխարհայացքի էությունն է, նրա գաղափարական դիրքորոշումը։ Նույնիսկ այն ստեղծագործությունները, որոնք հատուկ գրված չեն ինտերնացիոնալիստական թեմայով, աչքի են ընկնում սոցիալիստական հումանիզմի, տարբեր ազգերի աշխատավորների միասնության պաթոսով։ Ճշմարիտ է լենինյան դրույթը, որ ինտերնացիոնալիստական ապագա-

---

[1] Տե՛ս Зингер Л. Социалистический интернационализм и проблема национальной формы в современном искусстве, М., 1962.

յին չէ։ Այն ենթադրում է բազմապիսի էթնիկական ձևեր, ընդ որում և ազգային, որոնք այժմ գեղարվեստորեն ամրապնդում և հաստատում են կյանքի սոցիալիստական բովանդակությունը, հոգևոր արժեքները։ Փոխվել է ազգայինի որակը, նրա ֆունկցիան հարազատ մշակույթի զարգացման գործում։ Անհրաժեշտ է միշտ հաշվի առնել ազգայինի կենդանի դիալեկտիկան։ Միայն սոցիալիստական ինտերնացիոնալիզմն է ազգային զգացումին և ինքնագիտակցությանը տալիս ճիշտ ուղղություն։ Ազգայինը արգելք չի հանդիսանում թափանցելու ուրիշ ժողովուրդների հոգեկան ու էսթետիկական աշխարհը, յուրացնելու համաշխարհային մշակույթի լավագույն կողմերը։ Մտահորիզոնի, հետաքրքրությունների լայնությունը չի նշանակում, որ մարդ պետք է հրաժարվի իր ժողովրդի բնավորությունից, սովորույթներից և ավանդույթներից և իր դրանց օտարմամբ դառնա ավելի կատարյալ անձնավորություն։

Յուրաքանչյուր ժողովուրդ հպարտանալու շատ բան ունի, որը և նրան դարձնում է ինքնատիպ։ Սերը սեփական ազգի, լեզվի, պատմության, հոգեկան արժեքների նկատմամբ բնական է ու հասկանալի։ Ազգային հպարտության զգացումը վերին աստիճանի բարեբեր է, եթե այն հենվում է ինտերնացիոնալ հիմքերի վրա ու սնվում է այդ հարուստ աղբյուրից։ Նման զգացումն ընդհանուր ոչինչ չունի ազգային հեգեմոնիզմի, բուրժուական նացիոնալիզմի, սեփական ժողովուրդը մյուս ժողովուրդներին հակադրելու միտումի հետ։ Սովետական հայրենասիրությունն օրգանապես զուգորդվում է սոցիալիստական ինտերնացիոնալիզմին, պարզ գիտակցելով, որ մյուս ժողովուրդների ճակատագրերի նույնությամբ բազմապատկվում են սեփական ժողովրդի ստեղծագործական եռանդի հնարավորությունները։

Սովետական ազգերի համատեղ կյանքի փորձն ապացուցեց, որ եղբայրացած ժողովուրդները, շնորհիվ փոխադարձ օգնության ու բարեկամության, աննախադեպ զարգացրել են իրենց էկոնոմիկան, կուլտուրան, նյութական ու հոգևոր լինելության բոլոր կողմերը։ Սովորելով մեկը մյուսից, ընդօրինակելով ու ստեղծագործաբար վերափոխելով յուրաքանչյուրի ամենաարժեքավորը, նրանք նվաճել են ազգայինի

ինքնարտահայտման գաղափարները։ Սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ ընդհանրությունը նրանց ազգային ինքնատիպության հատկանիշներից է։ Դրա համար սերը սեփական ազգի, լեզվի հանդեպ բնականաբար ներառնում է նաև սերը ընդհանուր սոցիալիստական հայրենիքի նկատմամբ, որի մասն է կազմում սեփական հողը։ Այդ անքակտելիության, մասի ու ամբողջի ձուլվածքի, ինտերնացիոնալիստականի ու ազգայինի զգացումը լավ են արտահայտել սովետական բազմազգ գրականության առաջնակարգ բանաստեղծները։

Ազգայինը արվեստում չի կարող լիարյուն դրսևորվել, եթե այն չի բխում ժողովրդի կյանքից, նրա հոգևոր աշխարհից։ Ժողովրդայինի և ազգայինի փոխհարաբերությունը պատմականորեն փոփոխական է, դիալեկտիկական։

Սոցիալական ներհակությունների պայմաններում ժողովրդական մասսաները գործուն մասնակցություն չունեին հոգևոր արժեքների ստեղծման համազգային պրոցեսում, հետևաբար չէին կարող բարձրանալ ողջ ազգի գեղագիտական փորձի մակարդակին։ Բացի այդ, ոչ բոլոր խավերը, որոնք կազմում էին ազգի կենդանի հյուսվածքը, կարող էին դիտվել որպես ժողովրդի բաղկացուցիչ մաս։ Անցյալի առաջադիմական, դեմոկրատական միտքը նշել է, որ բարձր ազնվականության դասը վարելով ցոփ, պորտաբույծ կյանք, իրավունք չունի դասվել ժողովրդի մեջ, քանի որ հեռու է նրա սպասումներից, սոցիալական ձգտումներից։ Իր հերթին, ոչ ամեն ազգային կարելի է ժողովրդային համարել և ոչ բոլոր ազգայինն է ծառայել մարմնավորելու ժողովրդի գիտակցությունը, պատմական ավանդույթները։

Արվեստի ժողովրդայնությունը անհրաժեշտ է ընկալել պատմականության դիրքերից, սերտորեն կապված հասարակության զարգացման դինամիկայի հետ։ Պայմանականորեն արվեստի ժողովրդայնության զարգացումը երեք փուլ է ապրել։ Առանձին գրողներ, օրինակ, Գոգոլը, Դոբրոլյուբովի արտահայտությամբ, ժողովրդայնության է ձգտել գեղարվեստական խարխափանքով, տարերայնորեն, արտահայտելով իր ստեղծագործություններում ժողովրդի կյանքի արտաքին գծերն ու առանձնահատկությունները։ Սալտիկով-

Շչեդրինը, Նեկրասովը, Նալբանդյանը, Ճավճավաձեն և մյուսները մարմնավորել են մասսաների՝ աշխարհը վերափոխելու ստեղծագործական ձգտումները։ Հասարակության զարգացման սոցիալիստական փուլում արվեստի ժողովրդայնությունը դառնում է գիտակցված սկզբունք, արվեստագետի աշխարհըմբռնման էությունը, նրա դիրքորոշումը, սոցիալական ու էսթետիկական մեկնակետը[1]։

Սոցիալիստական հասարակության մեջ ժողովրդայինը և ազգայինը զարգանում են միասնական հիմքի վրա, փոխադարձաբար հարստացնելով ու կատարելագործելով միմյանց։ Նշանակո՞ւմ է արդյոք, որ նրանց միջև վերացել են բոլոր տարբերությունները և նույն երևույթի տարբեր համանիշներն են։ Փաստ է, որ սոցիալիստական ազգերը սոցիալապես ավելի միատարր են դառնում, ուժեղանում է նրանց բարոյաքաղաքական միասնությունը։ Սակայն ազգի բնույթը արտակարգ բարդ է։ Այն առաջիկայում էլ կզարգանա ու կկատարելագործվի։ Սոցիալիստական ազգերը ձերբազատվում են այն բոլոր պատահականից, հնացածից, անցողիկից, ձեռք բերելով նոր իրականությունից ծնված նոր որակներ։ Այդուհանդերձ, սոցիալիստական ազգերի հոգեկան խառնվածքում այս կամ այն չափով պահպանվել են նախապաշարմունքներ՝ ազգային սահմանափակության, անցյալության առանձին դրսևորումներ, երբեմն ազգային էգոիզմի տարրեր, կնոջ նկատմամբ ֆեոդալաբայական վերաբերմունքի մնացուկներ, որոնք պետք է հաղթահարվեն։

Սոցիալիստական հասարակության մեջ ժողովրդայինը ազգայինի բոլոր հատկանիշների և առանձնահատկությունների հասարակ գումար չէ։ Այն մարմնավորում է ազգայինի լավագույն, առաջադիմական, հեղափոխական ու դեմոկրատական գծերը։ Դրանք իրար չեն բացառում, սակայն չեն էլ համընկնում, դիալեկտիկորեն կապված են և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց։ Ժողովրդայինը սովետական արվեստում ենթադրում է պատմականորեն նորի, ժողովրդի հոգևոր առաջադիմության բազմակողմանի ընկա-

---

[1] Տե՛ս Սիմոնյան Ռ. Ս., Արվեստի սոցիալական և ազգային բնույթը, Երևան, 1982։

յումը, նրա սոցիալ-քաղաքական կերպարի, էսթետիկական ճաշակի ու հայացքների արտահայտությունը։ Պատմական տարբեր պարագաներում ազգային զգացումների բովանդակությունը տարբեր է։ Կապիտալիզմի պայմաններում, որ մի ժողովուրդ հալածում է մյուսին, հալածվող ազգի մոտ անչափ սրվում է ազգային առանձնակության զգացումը։ Ազգային զգացման անհարկի ուռճացումն ակամայից հանգեցնում է սնապարծության։ Այդ միտումը ճնշվող ազգերի մոտ հանդես է գալիս, որպես կանոն, պաշտպանելու թշնամուց հարազատ մշակույթը։ Ճնշվող ազգը գտնվելով գաղութատիրության ճիրաններում, փորձում է պահպանել սեփական պատմական դեմքը, իշխող ազգի ասիմիլյատորական քաղաքականությանը հակադրել իր ազգային լինելության բազմապիսի զինանոցը, համառ չփորձելով հրաժարվել այն բոլորից, ինչ կենսագործ է։ Բռնության դեմ պայքարում այդ բոլորն օգտագործվում է ազգային գոյության պահպանման համար։

Ազգային զգացումները ժողովուրդների եղբայրության և ինտերնացիոնալ միասնության պայմաններում այլ բնույթ են ստանում, կապված այն հանգամանքի հետ, որ սովետական ժողովուրդներից յուրաքանչյուրը գիտակցում է իր գործունեության տեղը և դերը սոցիալիզմի կատարելագործման ասպարեզում։ Նոր աշխարհի կերտման բնագավառում ժողովուրդները ներդրել են իրենց նյութական ու հոգևոր արժեքները։ Ինչպես չհպարտանալ սեփական ազգի հիանալի թռիչքով, ինչպես չուրախանալ հարազատ ժողովրդի տաղանդով, աշխատանքային մեծագործություններով, նրա չթուլացող կորովի հզորությամբ, որը վերածնվեց ու բազմապատկվեց սոցիալիստական հասարակության պայմաններում։

Սոցիալիստական հասարակության մեջ ինտերնացիոնալ գիտակցությունը և բուն ազգային զգացումները գոյություն չունեն և չեն կարող լինել իրարից անջատ։ Նշելով ազգային զգացումների ակտիվ բնույթը, անհրաժեշտ է նկատի ունենալ նրանց սոցիալ-հոգեբանական էությունը։ Տարբեր ժողովուրդների մոտ ազգային զգացումները դրսևորվում են կոնկրետ և տարբեր ձևերով ու երանգներով։ Սակայն ինչն է միավորում սովետական մարդկանց ազգային զգացումները,

ընչում է վերջիններիս ուժն ու նշանակությունը, որոնք այնքան ակնհայտորեն արտահայտվել են սովետական արվեստի բազում ստեղծագործություններում։ Ազգային զգացումի դիալեկտիկան դրսևորվում է հասարակական կյանքի փոխակերպման ու հարստացման մեջ։ Սոցիալիստական հասարակության պայմաններում ազգային զգացումները չեն անհետանում ու չեն ենթարկվում բանի վերացման, ինչպես արտասահմանում գրում են մեր գաղափարական հակառակորդները։ Ազգային զգացումները չվերածվելով ինչ-որ անդեմ, անշոշափելի երևույթի, հանդես են գալիս նոր բովանդակությամբ, ներդաշնակորեն ձուլվելով սոցիալիստական գիտակցությանը։

Սոցիալիզմը պահպանելով ժողովուրդների ազգային հարստությունը, նպաստում է նոր մեծ արժեքների ստեղծմանը։ Անցյալի գեղարվեստական ժառանգության մնայուն գործերը համահնչուն են նոր դարաշրջանին։ Այս երևույթը բնական է և օրինաչափ, քանի որ սոցիալիզմը բազում սերունդների կուտակած դրական փորձի արդյունքն է։ Նոր իրականության ներգործմամբ ազգային զգացումները բյուրեղանում՝ են, ձերբազատվելով պատահականից, հնացած արժեքներից, երբ ազգային զգացումները հակասում էին բանականությանը, հարուցում էին հուզական բռնկումներ, ազգայնական նախապաշարումներ, որոնք ապակողմնորոշում էին մարդուն։ Ազգային սահմանափակությունն ու սնապարծությունը կաշկանդում են ազգի առաջընթացը։

Ինտերնացիոնալիզմն ազգայինը հարստացնում է հումանիստական տարրերով, բարոյական վեհ սկզբունքներով։ Բուրժուական նացիոնալիզմը թունավորելով ազգային գիտակցությունը և ներարկելով իր դարն ապրած նախապաշարումներ, հոգեպես սնանկացնում է մարդկանց։ Այն թշնամանք սերմանելով ժողովուրդների միջև, ձգտում է նրանց զրկել մերձենալու բնական անհրաժեշտությունից[1]։

Ազգային մշակույթների զարգացման գործում վիթխարի դեր է խաղում մայրենի լեզուն։ Բնակչության լայն զանգվածները սեփական և ուրիշ ժողովուրդների հոգևոր արժեք-

[1] Տե՛ս **Рогачев П. М., Свердлин М. А.** Патриотизм, классы, революция, 1979.

ների առաջին հերթին հաղորդակցվում են մայրենի լեզվով: Կոմունիստական կուսակցությունը մշտապես պայքարել է հանուն բոլոր լեզուների լիակատար հավասարության: Բոլոր լեզուների լիակատար հավասարության լենինյան դրույթը կուսակցությունը հետևողականորեն իրականացրել է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Վերացվեցին ազգային բոլոր տիպի, այդ թվում լեզվային, արտոնությունները, ձեռք առնվեցին կոնկրետ միջոցներ ժողովուրդների լեզուների զարգացման համար: Տարբեր լեզուների հասարակական ֆունկցիաների անկաշկանդ ընդլայնումը անհրաժեշտ փաստ դարձավ ժողովուրդների սոցիալիստական հարաբերությունների պայմաններում: Մայրենի լեզվի զարգացումը լայն զանգվածներին հնարավորություն ընձեռեց կարճ ժամանակամիջոցում բարձրացնելու սեփական հոգևոր մակարդակը, ստեղծելու նոր էսթետիկական արժեքներ: Ազգային լեզուները մասսայական ինֆորմացիայի աղբյուրների, ուսումնական հաստատությունների միջոցով նպաստում են մեր բազմազգ երկրում կոմունիստական գաղափարների տարածմանը: Սակայն լեզվի հասարակական ֆունկցիայի ընդլայնումը հնարավոր դարձավ ոչ բոլոր ժողովուրդների համար: Որպեսզի իր կարողությունները լեզուն ի վիճակի լինի իրականացնել, նրա զարգացման համար անհրաժեշտ են ոչ միայն բարենպաստ սոցիալական պայմաններ, այլև գրողների, արվեստագետների որոշակի մինիմում: Էվենկների և արչինցիների լեզուները օգտագործվում են միայն առօրյայում: Փոքրաթիվ ժողովուրդները հնարավորություն չունենալով հաղորդակցվելու համաշխարհային գիտությանն ու կուլտուրային, կամավոր սովորում են հարևան ազգերի լեզուները: Երկլեզվությունը բնորոշել է ոչ միայն փոքրաթիվ ժողովուրդներին: Համատեղ կյանքի պայմաններում բազմալեզու սովետական ժողովուրդները արագ թափով տիրապետում են ռուսաց լեզվին՝ ազգամիջյան հաղորդակցման հզոր միջոցին: Հարկ է նկատել և այն, որ ռուս ժողովուրդը իր հեղափոխական եռանդի, անձնվիրության, աշխատասիրության, խոր ինտերնացիոնալիզմի շնորհիվ իրավամբ արժանացել է մեր սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների անկեղծ հարգանքին:

Սոցիալիզմի պայմաններում մշակույթների մերձեցման պրոցեսը ընդհանուր ոչինչ չունի համահարթման ինչ-որ միտումի հետ։ Ընդհակառակը, խորացվող և ընդլայնվող կուլտուրական կապերը, գեղարվեստական արժեքների փոխանակումը և մերձեցումը նպաստում են ազգայինի հարստացմանը եղբայրական ժողովուրդների նվաճումներով, որի շնորհիվ ազգային ստեղծագործությունները հոգեհարազատ են ու մատչելի բոլորին։ Դա վերաբերում է ոչ միայն մշակույթի սոցիալիստական բովանդակությանը, այլև ձևին։ Սովետական ժողովուրդների գեղարվեստական ստեղծագործման բոլոր ոլորտներում հաստատվում են էսթետիկական ընդհանուր նորմեր, ժանրեր, ձևավորվում են համասովետական ավանդույթներ, որոնք չեն «համահարթում», «միակերպ» չեն դարձնում ազգերի հոգևոր կյանքը, ընդհակառակը, դարձնում են ավելի հարուստ ու բովանդակալից, նպաստում նորանոր տաղանդների բացահայտմանը։ Ա. Վ. Լունաչարսկին նկատել է, որ ինտերնացիոնալիզմը չի ենթադրում համամարդկային ունիֆոնիայում ազգային մոտիվների ոչնչացումը, այլ միայն նրանց հարուստ ու ազատ ներդաշնակումը։

Սովետական արվեստում իրենց փայլուն արտացոլումն են գտել քսաներորդ դարի հեղափոխական վերափոխումները, ժողովրդի, կուսակցության, երկրի կյանքը։ Նրա էջերում, կտավներում, երաժշտական, դրամատուրգիական ու կինեմատոգրաֆիական գործերում խոյանում են Լենինի և նրա զինակիցների, քաղաքացիական պատերազմի և առաջին հնգամյակների հերոսների, մեծ Հայրենականի անմահ ռազմիկների հոյակապ կերպարները։ Սովետական արվեստի կիզակետում աշխատանքի մարդն է, սոցիալիզմի արարուն, եռանդուն, գործունյա, ակտիվ կառուցողը։ Այն պատկերում է իր ժամանակակցին՝ նրա ներաշխարհի և բարոյական որակումների բարդությամբ, նրա ուրախություններով ու տագնապներով, ճշմարտության և արդարության ձգտումով[1]։

1 Տե՛ս Գորբաչով Մ. Ս. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, 1986 թվականի փետրվարի 25-ին, Եր., Հայաստան, 1986։

Սովետական արվեստի առաջընթացի չափանիշը այն ներգործության իրական ասպարեզն է, որ նա ունենում է ժողովրդի գաղափարաբարոյական նկարագրի ձևավորման վրա, մարմնավորելով սոցիալիստական քաղաքակրթության հոգևոր հարստությունը: Սովետական մշակույթը հանդես է գալիս որպես երկրի բոլոր ազգերի ու ազգությունների կողմից ստեղծված հոգևոր արժեքների մի օրգանական համաձուլվածք: Հատկանշական է արվեստագետի ձգտումը՝ հենվելու բազմադարյան մշակութային ավանդույթների վրա, ավելի խորն ու վառ արտացոլելու ժողովրդի կյանքը:

Այդուհանդերձ, գեղարվեստական պրակտիկան համոզում է, ազգային մշակույթը որքան սերտ է շաղկապված ուրիշների հետ, այնքան նա ինտենսիվորեն է ներառում եղբայր ժողովուրդների հոգևոր և գեղարվեստական փորձի այն գծերը, որոնք ինտերնացիոնալ նշանակություն են ձեռք բերել, այնքան արագ և բեղմնավոր է նա զարգանում, այնքան մեծ ավանդ է նա մուծում սովետական ժողովրդի, մեր ամբողջ հասարակության հոգևոր կյանքի հարստացման մեջ:

Սովետական բազմազգ արվեստը, հաստատելով ժողովուրդների բարեկամության ու եղբայրության վեհ իդեալները, նրանց մղում է վսեմ մեծագործությունների: Հիրավի, ինտերնացիոնալիզմը սովետական արվեստի հիմնարար սկզբունքներից է, պաթոսը: